

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԵՎ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ՄԵԽԱԿ ԲԱԼԴՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-ՄԱՅԻՍԻ 27-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Մեխակ Բալդրյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի մարտի 19-մայիսի 27-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակմանը աշխատանքային քննարկումներին, շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

- 1) «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր,
- 2) ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 502-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ,
- 3) «Տարածք հետ վերցնելու և ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ:

2. Կազմել եմ ներման խնդրագիր ներկայացրած դատապարտյալների անձնական գործեր:

3. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

4. Ուսումնասիրել եմ քրեական և քրեակատարողական օրենսդրությանն առնչվող տարբեր իրավական հարցերի և հիմնախնդիրների կապակցությամբ միջազգային փորձ և դատական պրակտիկա և ըստ այդմ ներկայացրել եմ ամփոփ տեղեկանքներ և վերլուծություններ:

5. Կազմել եմ Մարդու իրավունքների պաշտպանից, ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբից, այլ պետական մարմիններից, հասարակական

կազմակերպություններից, քաղաքացիներից, դատապարտյալներից և կալանավորված անձանցից ստացված ընթացիկ դիմումների, գրությունների, հարցումների և հաշվետվությունների վերաբերյալ պատասխանների նախագծեր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



Մեխակ Բալդրյան

27.05.2025թ.